ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 30.06.2016թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ 66/16

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով «ՋԻ ԱՐ ԲԻԼԴԻՆԳ» ՍՊԸ-ի 13.06.2016թ. ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-66/16 բողոք), ինչպես նաև ուսումնասիրելով ՀՀ ԿԱ ԱՆ «Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն» ՓԲԸ-ի ներկայացրած 17.06.2016թ. գրությունը և կից փաստաթղթերը, ԳԲԽ-66/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 28.06.2016թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

1. **«ՋԻ ԱՐ ԲԻԼԴԻՆԳ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին 13.06.2016թ. ներկայացրած բողոքով «ՋԻ ԱՐ ԲԻԼԴԻՆԳ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) հայտնել է հետևյալը.

«Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար՝ տարածքի բարեկարգման, կանաչապատման և ցանկապատման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՌԱԿ-ԲԸԱՇՁԲ-2016/01» ծածկագրով բաց ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին, ի թիվս այլ ընկերությունների, հայտ է ներկայացրել նաև «Ջի ԱՐ Բիլդինգ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2016թ. հունիսի 6-ի N 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Ջի ԱՐ Բիլդինգ» ՍՊԸ-ի հայտում ներառվող փաստաթղթերը ներկայացվել են 1 բնօրինակ և 1 պատճե տարբերակով, իսկ հրավերի 2

մասի 5 կետով սահմանվում է, որ հայտում ներառվող փաստաթղթերը պետք է ներկայացնել 1 բնօրինակ և 2 պատճե տարբերակով: Բացի այդ՝ «Ջի ԱՐ Բիլդինգ» ՍՊԸ-ի հայտում գնային առաջարկի ձևը սխալ է լրացված և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 45-րդ կետի պահանջները՝ մերժել է «Ջի ԱՐ Բիլդինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

Ընկերությունը նշել է, որ Ընթացակարգի բացման նիստի արդյունքներով ներկայացրել է ամենացածը գինը, և Պատվիրատուի կողմից Ընկերության հայտը չմերժելու դեպքում «Ջի ԱՐ Բիլդինգ» ՍՊԸ-ն կճանաչվեր 1-ին տեղը զբաղեցրած մասնակից:

Սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2016թ. հունիսի 7-ի N 3 արձանագրության համաձայն՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել հրավերի պահանջներին բավարարող նվազագույն գնային առաջարկ ներկայացրած ընկերությունը՝ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ն:

«Ջի ԱՐ Բիլդինգ» ՍՊԸ-ն գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած գնային առաջարկով, սահմանել է, որ ուսումնասիրելով պատվիրատուի կողմից տրամադրված «ՌԱԿ-ԲԸԱՇՁԲ-2016/01» ծածկագրով ընթացակարգի հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, ընկերությունը առաջարկում է պայմանագիրը կատարել հետևյալ գներով՝ ինքնարժեք-76472000, շահույթ-6592000, ԱԱՀ-15294400, առաջարկված ընդհանուր գինը՝ թվերով-91766400, տառերով-իննսունմեկ միլիոն յոթ հարյուր վաթսունվեց հազար չորս հարյուր:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 31-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք է ընդունվում տառերով գրված գումարը:

Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի գնի հաշվարկը պետք է ներառի տվյալ գնման պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերի, տուրքերի, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և շահույթը:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշման 35-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և

ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով «Ջի ԱՐ Բիլդինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջակից հստակ երևում է, որ Ընկերությունը պահպանել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, այսինքն՝ Ընկերության կողմից առաջարկված պայմանագրի գնի հաշվարկում ներառվել են տվյալ գնման պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը):

Ընկերությունը նշել է նաև, որ չնայած այն հանգամանքին, որ գնային առաջարկում ինքնարժեքի հաշվարկում տեղի է ունեցել վրիպակ, այնուամենայնիվ «Ջի ԱՐ Բիլդինգ» ՍՊԸ-ի կողմից պահպանվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները, և տվյալ պարագայում պատվիրատուն պետք է հիմք ընդուներ ընկերության կողմից ներկայացված ընդհանուր գումարը՝ տառերով և թվերով գրված և որպես նվազագույն գին ներկայացրած մասնակից ճանաչեր 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

«Ջի ԱՐ Բիլդինգ» ՍՊԸ-ն հայտնել է նաև, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2016թ. հունիսի 6-ի N 2 հստակ չի նշվել, թե Ընկերության գնային առաջարկում ինչն է սխալ լրացված, իսկ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ գնման ընթացակարգի արձանագրությունը գնման ձևին համապատասխան պարունակում է՝ հայտի մերժման դեպքում՝ դրա հիմնավորումը:

Ելնելով վերոշարադրյալ իրավական և փաստական հանգամանքներից, Ընկերությունը հանգել է այն եզրակացության, որ «Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՌԱԿ-ԲԸԱՇՁԲ-2016/01» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թույլ է տրվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի, 8-րդ հոդվածի 8-րդ մասին խախտումներ, ինչն հանգեցրել է Ընկերության հայտը անհիմն մերժելուն:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից 1 բնօրինակ, 1 պատճեն բերելու հանգամանքին, ապա այս կապակցությամբ Ընկերությունը հայտնել է, որ Կարգի 45-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման

արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Այսինքն Ընթացակարգի հանձնաժողովի կողմից նաև թույլ է տվրել Կարգի 45-րդ կետի խախտում, ժամանակ չի տրվել շտկելու հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունը, այն է՝ հրավերով սահմանված 2 պատճենի փոխարեն ներկայացվել է 1 պատճեն, որը սամանված է հենց գնման ընթացակարգի հրավերով:

Օրենքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը կարող է ներկայացվել միայն նույն օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Խորհուրդն իրավունք ունի կիրառելու ժամանակավոր միջոցներ, որոնք ուղղված են ներկայացված խախտման վերացմանը կամ առնչվող շահերին հասցվելիք հետագա վնասների կանխմանը, այդ թվում՝ գնումների ընթացակարգը կամ պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի կայացրած որևէ որոշման իրականացումը կասեցնելուն ուղղված միջոցներ, ինչպես նաև դադարեցնելու գնումների ընթացակարգի ընթացքում պատվիրատուի կամ գնահատող հանձնաժողովի կայացրած առանձին որոշումներ:

Օրենքի 49-րդ հոդվածի բողոքը ինքնաբերաբար չի կասեցնում պայմանագրի կնքման ընթացակարգը, սակայն մինչև խորհրդի կողմից սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասերով նախատեսված որոշման ընդունումը պատվիրատուն իրավունք չունի պայմանագիր կնքելու:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է.

1. Դադարեցնել ՀՀ ԿԱ ԱՆ «Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն» ՓԲԸ-ի կողմից «ՌԱԿ-ԲԸԱՇՁԲ-2016/01» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի 2016թ. հունիսի 6-ի թիվ 2 արձանագրության 4.1 կետով և 2016թ. հունիսի 7-ի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշումները:

2. Որպես միջանկյալ ընթացակարգ՝ կիրառել ժամանակավոր միջոց և կասեցնել «ՌԱԿ-ԲԸԱՇՁԲ-2016/01» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի

կողմից որևէ գործողության իրականացումը, այդ թվում նաև պայմանագրի կնքման գործընթացը:

«Ջի ԱՐ Բիլդինգ» ՍՊԸ-ի տնօրենը, մասնակցելով 20.06.2016թ. տեղի ունեցած ԳԲԽ-66/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստին, պնդել է իր բողոքով ներկայացրած դիրքորոշումը:

2. ՀՀ ԿԱ ԱՆ «Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները

Կենտրոնը 14.06.2016թ. թիվ 01/04.1/2303-16 գրությամբ ՀՀ ԿԱ ԱՆ «Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն» ՓԲԸ-ին խնդրել է եռօրյա ժամկետում ներկայացնել «ՌԱԿ-ԲԸԱՇՁԲ-2016/01» ծածկագրով բաց ընթացակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները և տալ կարծիք:

Պատվիրատուն 17.06.2016թ. Կենտրոնին է ներկայացրել Ընթացակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները և հայտնել է հետևյալը.

«Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար «Տարածքի բարեկարգման, կանաչապատման և ցանկապատման աշխատանքների» ձեռքբերման նպատակով հայտարարված «ՌԱԿ-ԲԸԱՇՁԲ-2016/01» ծածկագրով բաց ընթացակարգը հայտարարվել է 2016թ-ի ապրիլի 27-ին, հայտերի բացումը կատարվել է 2016թ-ի հունիսի 6-ին, ժամը՝ 11:00-ին: Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել տաս մասնակից, այդ թվում նաև՝ «Ջի ԱՐ Բիլդինգ» ՍՊԸ-ն:

Ընկերության կողմից 2016թ. հունիսի 13-ին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին բողոք է ներկայացվել «ՌԱԿ-ԲԸԱՇՁԲ-2016/01» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2016թ. հունիսի 6-ի N2 արձանագրության 4.1 կետով և հունիսի 7-ի N 3 արձանագրությամբ մասնակցի հայտը մերժելու մասին կայացրած որոշումները կասեցնելու վերաբերյալ:

Գնահատող հանձնաժողովի կողմից «Ջի ԱՐ Բիլդինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի մերժման պատճառները հետևյալն են.

1. Մասնակցի կողմից հայտում ներառվող փաստաթղթերը կազմված են եղել 1 բնօրինակ և 1 պատճե տարբերակով, այնինչ հրավերի 1-ին մասի 5-րդ՝ «Հայտերը

պատրաստելու կարգը» կետի 5.1 ենթակետով հստակ նշվում է. «Ծրարում ներառված փաստաթղթերը, ինչպես նաև սույն հրավերի 2-րդ մասի՝ հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը /տեղեկությունները/, կազմվում են բնօրինակից /բացառությամբ 3-րդ կողմի կողմից տրամադրված կամ հաստատված փաստաթղթերի, որոնց դեպքում ներկայացվում է դրանց՝ բնօրինակից պատճենահանված տարբերակը/ և 2 օրինակ պատճեններից»: Գնահատող հանձնաժողովի կողմից մասնակցի հայտը մերժելիս՝ հիմք է ընդունվել հրավերի 1-ին մասին 5-րդ կետի 5.3 ենթակետով սահմանված պահանջները:

2. Գնային առաջարկի աղյուսակում մասնակցի առաջարկած ընդհանուր գինը պետք է հավասար լինի ինքնարժեք, շահույթ և ԱԱՀ բաղադրիչների հանրագումարին (6=3+4+5): Մասնակցի ներկայացված աղյուսակում առկա է անհամապատասխանություն բաղադրիչների հանրագումարի և ընդհանուր գնի մեջ: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011թ-ի 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 45-րդ կետի պահանջները, այն է. *«Եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը կամ գնային առաջարկը կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը»՝* ՌԱԿ-ԲԸԱՇՁԲ-2016/01 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից մասնակցի գնային առաջարկը որակվել է՝ որպես հրավերի պահանջներին անհամապատասխան, իսկ հայտը՝ մերժման ենթակա է:

Պատվիրատուն չի համաձայնում մասնակցի բողոքում ներկայացված այն փաստարկի հետ, որ գնահատող հանձնաժողովը պետք է հիմք ընդուներ մասնակցի ներկայացրած ընդհանուր գինը՝ տառերով գրված, քանի որ գնահատող հանձնաժողովը գնային առաջարկների համեմատումը իրականացնում է համաձայն ՀՀ կառավարության 2011թ-ի 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 35-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջների՝ գնահատվում և համեմատվում են

մասնակիցների ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի գումարի: Բացի այդ մասնակցի հայտում անհամապատասխանությունը ոչ թե տառերով և թվերով գրված գումարների միջև է, այլ ընդհանուր գումարի և բաղադրիչների հանրագումարի միջև, ուստի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 3-րդ մասին դրույթները տվյալ պարագայում կիրառելի չեն:

Պատվիրատուն հայտնել է, որ համաձայն չէ նաև Ընկերության այն կարծիքի հետ, որ 2016թ. հունիսի 6-ի N 2 արձանագրության մեջ ներկայացված չէ հայտի մերժման հիմնավորումը. հայտի՝ հրավերի պահանջներին անհամապատասխանության նկարագրությունը ներկայացված է արձանագրության 4.1 կետում, իսկ մերժման հիմքը շարադրված է 5.1 կետում:

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ Պատվիրատուն հայտնել է իր անհամաձայնությունը «Ջի ԱՐ Բիլդինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքում բերված փաստարկների վերաբերյալ, քանի որ գնահատող հանձնաժողովը որոշումները կայացնում է ՀՀ գնումների օրենսդրության շրջանակներում և հաշվի է առնում բոլոր մասնակիցների շահերը, այլ ոչ թե ցուցաբերում է իրավիճակային մոտեցում՝ պաշտպանելով առանձին մասնակիցների սուբյեկտիվ շահերը:

3. ԳԲԽ-66/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 28.06.2016թ. եզրակացությունը և առաջարկել է «Ջի ԱՐ Բիլդինգ» ՍՊԸ-ի 13.06.2016թ. ներկայացրած բողոքը բավարարել. դադարեցնել ՀՀ ԿԱ ԱՆ «Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոն» ՓԲԸ-ի կողմից «ՌԱԿ-ԲԸԱՇՁԲ-2016/01» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2016թ. հունիսի 6-ի թիվ 2 արձանագրության 4.1 կետով կայացրած որոշումը՝ «Ջի ԱՐ Բիլդինգ» ՍՊԸ-ի մասով և, որպես հետևանք, նույն արձանագրության 5.1 կետով կայացրած որոշումը՝ «Ջի ԱՐ Բիլդինգ» ՍՊԸ-ի մասով, ինչպես նաև դադարեցնել 2016թ. հունիսի 7-ի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշումը:

4. ԳԲԽ-66/16 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-66/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Ռադիոհզոտոպների արտադրության կենտրոն» ՓԲԸ-ի կողմից տարածքի բարեկարգման, կանաչապատման և ցանկապատման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՌԱԿ-ԲԸԱՇՁԲ-2016/01» ծածկագրով բաց ընթացակարգը, որին, ի թիվս այլ ընկերությունների, հայտ է ներկայացրել նաև «Ջի ԱՐ Բիլդինգ» ՍՊԸ-ն:

2. «Ջի ԱՐ Բիլդինգ» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտով ներկայացված գնային առաջարկով նշել է, որ ուսումնասիրելով պատվիրատուի կողմից տրամադրված «ՌԱԿ-ԲԸԱՇՁԲ-2016/01» բաց ընթացակարգի հրավերը, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, առաջարկում է պայմանագիրը կատարել հետևյալ գնով՝ 91 766 400 (իննսունմեկ միլիոն յոթ հարյուր վաթսունվեց հազար չորս հարյուր) ՀՀ դրամով (առաջարկված ընդհանուր գին):

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.06.2016թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի N 2 արձանագրության.

- 4.1 կետի համաձայն՝ «Ջի ԱՐ Բիլդինգ» ՍՊԸ-ի կողմից հայտում ներառվող փաստաթղթերը ներկայացվել են 1 բնօրինակ և 1 պատճե տարբերակով, իսկ հրավերի 2-րդ մասի 5-րդ կետով սահմանվում է, որ հայտում ներառվող փաստաթղթերը պետք է ներկայացնել 1 բնօրինակ և 2 պատճե տարբերակով: Բացի այդ՝ «Ջի ԱՐ Բիլդինգ» ՍՊԸ-ի հայտում գնային առաջարկի ձևը սխալ է լրացված:
- 5.1 կետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով Կարգի 45-րդ կետի պահանջները, որոշել է «Ջի ԱՐ Բիլդինգ» ՍՊԸ-ի հայտը մերժել:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ եթե գնման գինը գերազանցում է գնումների բազային միավորը, ապա պատվիրատուն կազմում է գնման ընթացակարգի արձանագրություն: Գնման ընթացակարգի արձանագրությունը գնման ձևին համապատասխան պարունակում է՝ ***հայտի մերժման դեպքում՝ դրա հիմնավորումը:***

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում հանձնաժողովը գնահատում է նույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և, հրավերով սահմանված դեպքերում ու կարգով, գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

Կարգի 29-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը պատասխանատվություն է կրում **իր որոշումների**, այդ թվում՝ իր կողմից հաստատված փաստաթղթերի, պահանջների, ինչպես նաև գնման ընթացակարգի հաղթողին որոշելու **հիմնավորվածության համար**:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 06.06.2016թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի N 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Ջի ԱՐ Բիլդինգ» ՍՊԸ-ի կողմից հայտում ներառվող փաստաթղթերը ներկայացվել են 1 բնօրինակ և 1 պատճե տարբերակով, իսկ հրավերի 2-րդ մասի 5-րդ կետով սահմանվում է, որ հայտում ներառվող փաստաթղթերը պետք է ներկայացնել 1 բնօրինակ և 2 պատճե տարբերակով, բացի այդ արձանագրվել է, որ «Ջի ԱՐ Բիլդինգ» ՍՊԸ-ի հայտում գնային առաջարկի ձևը սխալ է լրացված, սակայն Խորհուրդը արձանագրում է, որ հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ չի նկարագրվել, չի հիմնավորվել, թե «գնային առաջարկի ձևը սխալ

լրացված» ասելով, ինչ ի նկատի ունի Պատվիրատուն և գնային առաջարկը լրացնելիս՝ մասնակիցը ինչ սխալ է թույլ տվել, ինչը հակասում է իրավական որոշակիության և կանխատեսելիության պահանջներին:

Մինչդեռ, ինչպես արդեն նշվել է, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը սահմանում է, որ գնման ընթացակարգի արձանագրությունը գնման ձևին համապատասխան ***հայտի մերժման դեպքում*** պետք է պարունակեր ***հայտի մերժման հիմնավորումը***, Կարգի 29-րդ կետի 9-րդ ենթակետը սահմանում է, որ **հանձնաժողովը պատասխանատվություն է կրում իր որոշումների հիմնավորվածության համար**, ուստի Խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուի կողմից խախտվել են Օրենքի 8-րդ հոդվածի հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և Կարգի 29-րդ կետի 9-րդ ենթակետով սահմանված պահանջները:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից 1 բնօրինակ, 1 պատճե ներկայացնելու հանգամանքին, ապա այս կապակցությամբ Խորհուրդը գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը խախտել է Կարգի 45-րդ կետով սահմանված պահանջները, քանի որ Կարգի 45-րդ կետի սահմանում է, որ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, սակայն տվյալ դեպքում Ընկերությանը չի տրվել ժամանակ արձանագրված անհամապատասխանությունը շտկելու համար:

Բացի այդ, Օրենքի 30-րդ հոդվածի 1-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հրապարակվում են յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը՝ տառերով և թվերով արտահայտված:

Նույն հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետի համաձայն՝ արձանագրությունը պարունակում է յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը:

Օրենքի 31-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք է ընդունվում տառերով գրված գումարը:

Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի գնի հաշվարկը պետք է ներառի տվյալ գնման պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերի, տուրքերի, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և շահույթը:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 35-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում....:

Կարգի 44-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում նախագահը (նիստը նախագահողը) նիստը հայտարարում է բացված և հրապարակում է գնման առարկայի ընդհանուր գինը՝ մեկ թվով արտահայտված:

Ուսումնասիրելով Ընթացակարգին մասնակցելու նպատակով «Ջի ԱՐ Բիլդինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը, Խորհուրդը արձանագրում է, որ Ընկերությունը պահպանել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, այսինքն՝ Ընկերության կողմից առաջարկված պայմանագրի գնի հաշվարկում ներառվել են տվյալ գնման պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը): Բացի այդ, Խորհուրդը հայտնում է, որ գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն՝ որպես պայմանագրի գին պետք է ընդունվի մասնակցի կողմից ***գնային առաջարկով ներկայացված ընդհանուր գինը***՝ մեկ թվով արտահայտված (տվյալ դեպքում Ընկերության կողմից առաջարկված իննսունմեկ միլիոն յոթ հարյուր վաթսունվեց հազար չորս հարյուր ՀՀ դրամը):

Վերոշարադրվածի արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, խախտելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջները, մերժել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից «Ջի ԱՐ Բիլդինգ» ՍՊԸ-ի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ ներկայացնել հաջորդ տեղը զբաղեցրած մասնակից՝ «Վահրադյան Շին» ՍՊԸ-ին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Ջի ԱՐ Բիլդինգ» ՍՊԸ-ի 13.06.2016թ. ներկայացրած բողոքը բավարարել. դադարեցնել ՀՀ ԿԱ ԱՆ «Ռադիոհզոտոպների արտադրության կենտրոն» ՓԲԸ-ի կողմից «ՌԱԿ-ԲԸԱՇՁԲ-2016/01» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2016թ. հունիսի 6-ի թիվ 2 արձանագրության 4.1 կետով կայացրած որոշումը՝ «Ջի ԱՐ Բիլդինգ» ՍՊԸ-ի մասով և, որպես հետևանք, նույն արձանագրության 5.1 կետով կայացրած որոշումը՝ «Ջի ԱՐ Բիլդինգ» ՍՊԸ-ի մասով, ինչպես նաև դադարեցնել 2016թ. հունիսի 7-ի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշումը:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝ **Ավետիսյան Վարդան**

Անդամ՝ **Նազարյան Մանե**